ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.03.2016թ.

Ո Ր Ո Շ Ում

ԳԲԽ-25/16 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-25/16 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի 2016 թվականի մարտի 15-ի բողոքով ԳԲԽ-25/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ավանգարդ» ՍՊԸ-ի 2016 թվականի մարտի 15-ի բողոքով ԳԲԽ-25/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության կողմից տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՔԿՀ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2016թ. թիվ 5 որոշումը կասեցնելու մասին ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Գոռ Գրիգորյան**